

ունի առաջին անգամ ուսումնասիրութեան առարկայ ըրած ըլլալով գիրին հոգեբանական արժէքը:

Անկէ յետոյ ուսումնասիրողներու թիւը հետզհետէ շատցաւ, եւ անկէ հարիւր տարի վերջը Փարիզի մէջ արդէն դպրոց մը կը բացուէր, նպատակ ունենալով դարկ տալու Գրամեկնութեան ուսումին: Այսպէս կամաց կամաց Գրամեկնութիւնը առաջ կ'երթար, ուրիշ գիտութիւններու հետ դրեթէ համընթաց:

Այսօր Յրանայի, Գերմանիոյ եւ Ամերիկայի մէջ Գրամեկնութեան կեդրոններ կան, որոնք կը կազմակերպեն ամէն տարի միջազգային համաժողովներ, ուր իւրաքանչիւր պատուիրակ իր տեղեկագիրը կը բերէ նոր ուսումնասիրութիւններու մասին: Այս համաժողովներուն կը մասնակցի նաեւ իտալիա:

Գրամեկնութեան ուսումնասիրութեամբ պարապողներուն մէջ կան նշանաւոր գիտնականներ, որոնց կարգին յիշենք՝ յայտնի փիլիսոփայ Լայպնից, ընկերաբան եւ ղեռնագէտ՝ Լոմպրոզոյ, բժիշկ Մուրրի, որոնք իրենց ըրած կարեւոր գիտելիքները եւ նուաճումներով հանրածանօթ են:

ԺԸ դարուն՝ Գերմանիոյ մեծագոյն բանաստեղծը՝ Վոլֆկանկ Կէօթէ ալ Գրամեկնութեան խոր համակիրներէն էր: Իր երիտասարդական շրջանին գրած «Երկտասարդ Վերթերի տառապանքները» գործին մէջ կը կարդանք. «Այս գիրքը հանդարտ եմ, ինչպէս գիրս ալ ցոյց կու տայ»: Յետոյ երբ կը խօսի խենթի մը մասին՝ որ ձմեռը ձիւներու մէջէն ծագիլ կը փնտռէ, որպէսզի փունջ մը կազմէ իր երեւակայական սիրահարին տանելու համար, կ'ըսէ. «Ժամանակին խելացի տըղայ մ'էր եւ աղուոր ալ գիր ունէր»:

Իր սիրելի բարեկամներէն՝ Լաւաթէր, որ այն ատենները գիմադիծերու ուսումնասիրութեան կը հետեւէր, Կէօթէի տըղած խորհուրդին վրայ Գրամեկնութեամբ ալ հետաքրքրուեցաւ, եւ մասնաւորապէս

աշխատեցաւ ուսումնասիրել իւրաքանչիւր անհատի գիրին մէջ՝ իր պատկանած ազգին նկարագրին ընդհանուր գիծերը: Արդարեւ Լաւաթէրի եւ անոր հետեւողներու ուսումնասիրութեամբ գիտութիւնը հասաւ այն եզրակացութեան՝ որ իւրաքանչիւր անձի գիրը ո'չ միայն իր պատկանած ազգին, այլ նաեւ իր ապրած շրջանի նկարագրին յայտնի դրոշմը կը կրէ: Գիրը կը նկատուէր հետեւաբար ո'չ միայն հայելին իւրաքանչիւր անհատին, այլ նաեւ անոր ապրած դարաշրջանին: Դարաշրջան բառով կը հասկնանք պատմական որոշ շրջան մը իր առանձնատուկ կողմերով: Միեւնոյն շրջանի պատկանող հազարաւոր գիրերու մէջէն կարելի է գտնել այն ժամանակի ընդհանուր պատկերը հասարակաց միացման գիծերով: Շրջանի մը պատկանող մարդոց գիրը ուրիշ շրջանի մը պատկանողներէն տարբեր ձեւ ունի: Արդարեւ պէտք է կայ անպատճառ գրամեկնիչ մ'ըլլալ զանազանելու համար ԺԸ դարու փնտուրէ գրիչով գրուած մը՝ ԺԸ դարու գրութենէն, գրուած մետաղեայ գրիչով: Նմանապէս տարբեր է ներկայ դարու գիրը՝ ԺԺ դարու գիրէն: Մեր մեծ հայրերուն գիրերը պարզ, միաձեւ, բարակ, կանոնաւոր ու յստակ էին, նշան՝ մեղմ ու հանդարտ հոգիի: Ո'րքան տարբերութիւն մեր ապրած դարէն:

Այժմ հոգեկան տաղանալի շրջանի մը մէջ կ'ապրին: Երիտասարդութիւնը խռովեալ, անհանգարտ, կը հետապնդէ բան մը՝ զոր ինքն իսկ չի գիտեր: Շատեր ջղային հիւանդներ են, անձնատուր քմահաճոյքի եւ կիրքերու: Ներկայ քաղաքակրթութեան յատկանիշն է քննադատութեան ոգին, որ չի հանդուրժեր ոչ մէկ ընդունուած ձեւերու: Այս ոգիին շնորհիւ է որ կարելի եղաւ ձեռք բերել նորանոր նուաճումներ եւ հսկայ յառաջդիմութիւններ առ հասարակ գիտական ամէն ճիւղերու մէջ, սակայն տեսանք նաեւ Փիքասսոնէրու արտաոքութիւնը եւ երաժշտութեան

մէջ տոտէֆաֆոնի-ի աններդաշնակ տարօրինակութիւնը: Դարուս այս ոգին է ահա, որ պայծառօրէն ի յայտ կու գայ մեր գիրերուն մէջ ալ:

Զանազան դարաշրջաններու գիրերուն հաւաքածոյ մը՝ ներկայ ու գալիք սերունդին համար կրնայ ծառայել որպէս թանկագին միջոց մը՝ ուսումնասիրելու մշակութային յեղաշրջումը, սովորութիւնները, կեանքի ըմբռնումները, ընկերային հոսանքները, եւ այսպէս ներկայացնել պատկերը ընդհանուր մարդկային պատմութեան:

* * *

Որո՞նք են Գրամեկնութեան գիտական հիմքերը:

Ամէն ոք խօսելու, վարուելու, կենալու, շարժելու, քալելու, խնդալու, նայելու, լալու, ժպտելու՝ ձեւ մ'ունի. ունի նաեւ գիմադիծ մը, մարմին մը՝ որ մէկը միւսէն կը զանազանուի: Դիւրին է նկատել որ խօսուածքը, կեցուածքը եւ իր բոլոր շարժումները մարդուն բնութեան հետ սերտօրէն կապուած են: Օրինակի համար, անորոշ խօսուածքը՝ երկչոտներուն. խըրոխտ կեցուածքը՝ հպարտներուն. կամաց քալելը՝ հանդարտ մարդուն, անոյշ նայուածքը՝ ազնիւ հոգիներուն. դառն ժպիտը՝ հեղինակներուն յատուկ է: Ասոնք օրինակներ են որ կը ցուցնեն մարդուն հոգիին եւ արտաքին արտայայտութիւններուն իրարու հետ ունեցած յարաբերութիւնը:

Ինչպէս արտաքին արտայայտութիւնները մարդէ մարդ կը տարբերին, նոյնպէս գիրն ալ մարդէ մարդ կը տարբերի, անհուն զանազանութեամբ:

Արտաքին տարբերութիւնները հոգեկան տարբերութիւններուն հետ կապուած ըլլալուն, կարելի է դիւրութեամբ ըմբռնել որ գիրի տարբերութիւններն ալ հոգեկան տարբերութիւններու կապուած են:

Իւրաքանչիւր անձի կը համապատաս-

խանէ որոշ գիր մը. երբ անձը փոխուի՝ գիրն ալ կը փոխուի: Այս դադաւարը ծեծուեցաւ 1896-ին Փարիզ գումարուած հոգեբանական ընկերութեան ժողովին մէջ, ուր տեղի ունեցան զանազան փորձեր, զոր մանրամասնօրէն հրատարակեց Փարիզի «Լա Փրէս Մէտիքալ» երկշաբաթաթերթը 1932-ին Փետրուարի թիւին մէջ:

Քննածութեամբ բոլորովին գիտակցութիւնին կորսնցուցած եւ գրամեկնութեան նէ անտեղեակ քանի մը ենթականերու կը թելադրուի իրենց անձնականութիւնը փոխել: Այսպէս մէկուն կ'ըսեն. «Դուն Արաւոն ես» (Մոլիէի «Աղահ» կատակերգութեան հերոսը). եւ ահա անմիջապէս ենթակային դէմքին գիծերը կը փոխուին. թելադրուած անձին բնութեան համապատասխան ձեւ մը կ'առնէ, եւ միեւնոյն ժամանակ գիրն ալ կը փոխուի: Ուրիշ մը կ'ըսեն. «Դուն Նարոլէոն ես», եւ հետեւեալ բառերը դրել կը տըղին «Կրոնչին անմիջապէս բերել տուէ՛ք, կորսնցնելիք ժամանակ չկայ, թշնամին գիծերը անցած է», ստորագրէ «Նարոլէոն». այս մարդուն մտքին մէջ՝ որուն անձնականութիւնը փոխուած է՝ ի՞նչ կը պատահի: Անմիջապէս ան կը յիշէ Նարոլէոնի մղած պատերազմներուն վրայ կարդացած դրուագները, իր երեւակայութեան մէջ յանկարծ մարմին կ'առնէ կոիւի, պատերազմի դադաւարը, եւ նկարագրին մէջ մէկէն ի մէկ կը կազմուի Նարոլէոնի կամքը, հաստատամտութիւնը ու յուսահատութիւնը. եւ այդ պահուն գրած գիրն ալ կը ցուցնէ կամք, հաստատամտութիւն եւ յուսահատութիւն: Մինչդեռ այդ մարդուն գիտակից վիճակի մէջ գրած գիրը, այս մասնաշաղկապութիւններէն մէկն ալ չի ցուցնէր:

Ուրիշ հասուն տարիքով, նոյնպէս քննածութեան վիճակի մէջ գտնուող մարդուն մըն ալ կ'ըսեն. «Դուն տասներկու տարեկան մանուկ մ'եմ»: Երբ այս թելադրութեան տակ կը սկսի գրել, ահա ասիկ

իր գիրը փոխուած է, տասներկու տարեկան մանուկի մը միամտութեան եւ անհոգութեան յատկանիշներն ունի:

Այս կերպով կ'ապացուցուի Գրամեկնութեան խսկական իրականութիւնը, փորձառական տուեալներու վրայ հիմնուած: Գուցէ մերձաւոր ապագային կրնայ նոյն խսկ դասուիլ բժշկութեան, տարրաբանութեան, բնագիտութեան նման ծանօթ գիտութիւններու շարքին:

Գրամեկնութիւնը հետաքրքրական եւ հրապուրիչ է ոչ միայն իբրեւ գիտութիւն, այլ նաեւ գործնական աշխարհի մէջ ալ իր նշանակելի օգտակարութիւններով: Կրնայ գնահատելի օժանդակ մը դառնալ ծնողներու, ուսուցիչներու եւ մանկավարժներու՝ երբ անոնք ուզեն թափանցել տղուն հոգիին, հասկնալ անոր տառապանքները՝ իրապէս փոքր, սակայն իրեն համար ահաւոր, եւ այսպէս գիտակցօրէն առաջնորդել անոր առաջին քայլերը: Յետոյ կարեւոր օժանդակ մը կրնայ դառնալ նախնական ուսումը լրացնող մանուկին ուղղութիւն մը տալու, ապագայ ասպարէզի մը ընտրութեան համար:

Ո՞րքան յուսախաբութիւններ սիրոյ եւ բարեկամական յարաբերութիւններու, եւ դործի ասպարէզի մէջ ինչքան վնասներ կը պատահին, պարզապէս անոր համար՝ որ դիմացինին հոգին խորապէս չենք ճանչցած:

Գրամեկնութիւնը, ինչպէս զաւկին ապագայ ասպարէզ մը ընտրել փափաքող ծնողքին խելացի ուղեցոյց մըն է, նոյնպէս աշխարհիկ մարդուն թանկագին խորհրդատու մը: Եթէ առաջինին մատնանիչ կ'ընէ զաւկին խսկական ընդունակութիւնը, երկրորդին՝ քօղազերծ կ'ընէ դիմացի մարդուն հոգիին բոլոր զաղտնի ծալքերը: Դատարաններու մէջ ալ շատ անգամ դատաւորը գրամեկնիչի մը օժանդակութեան կը դիմէ իր վճիռը տալէ առաջ:

Հոս պէտք է զանազանել զբի փորձագէտը գրամեկնիչէն. մինչ առաջինը կ'ըսէ

թէ երկու ձեռագիրները նոյն անձին կը պատկանին կամ ո՛չ, միւսը կը բացատրէ հեղինակին նկարագիրը:

Շատ մը վաճառականներ, սեղանաւորական հաստատութիւններ իրենց առնելիք պաշտօնեաներէն կը պահանջեն որ ձեռագիր նամակով ներկայացնեն իրենց խնդրագիրը՝ որպէսզի զանոնք գրամեկնիչի մը քննութեան ենթարկեն: Ամերիկայի եւ Գերմանիոյ մէջ ասիկա շատ ընդհանրացած սովորութիւն մ'է:

Կարելի է մարդու մը գիրը քննելով անոր ապագան գուշակել: Գրամեկնութիւնը լուրջ գիտութիւն մ'է, որ ո՛ր եւ է կապ չունի ձեռնահամայութեան, խաղի թուղթ բանալու, սուրճի դաւաթ նայելու սովորութեան, աւելի կամ նուազ մոդական արուեստներու հետ: Սակայն որովհետեւ մեր ապագան մեծ մասամբ կախում ունի մեր սեփական մտային ու հոգեկան յատկութիւններէն եւ դժուարութիւնները գիմագրաւելու կարելիութիւններէն, կըրնանք ենթակայի մը գիրը ուսումնասիրելով հետեւցնել անոր մարդկային արժէքը, հետեւաբար նաեւ գուշակել, որոշ համեմատութեամբ մը, անոր ապագան:

Գիրը՝ որպէս հայելի անձնականութեան, փոփոխութիւններ կը կրէ անոր կազմութեան եւ յեղաշրջումներու ընթացքին, սկսելով մանկական հասակէն մինչեւ ծերութեան տարիքը: Ոչ միայն տարիներու ընթացքին, այլ նաեւ կեանքի դանդաղան պահերուն, յուզումներու, հոգեկան տառապանքներու ժամանակ՝ գիրն ալ ցոյց կու տայ փոփոխութիւններ: Ուրախութիւնը, տխրութիւնը, գոհունակութիւնը, ցաւը իրենց որոշ դրոշմը կը ձգեն գիրին վրայ: Այս կերպով գրամեկնութիւնը կը դառնայ կարեւոր օժանդակ մը հոգեկան վիճակը քննող բժշկին՝ որ կ'ուզէ հասկնալ հիւանդին տրամադրութիւնը, ճանչնալ անոր անձկութիւններն ու տառապանքները, դարմանելու համար զանոնք:

«Լա Փրէս Մէտիքալ» երկարամիակութեամբ 1932 տարուոյ Մայիս ամսուան թիւին մէջ յօդուած մը հրատարակեց «Psychothérapie graphologique» վերնագրով, ուր սա տեսակէտը կը յայտնուէր: Որոշ ջղային հիւանդութեամբ տառապողները հանրապէս անճոռնի գիր մը կ'ունենան: Համբերատար աշխատութեամբ այդ հիւանդներու գիրերը շտկել տալ աշխատելով՝ կարելի է անոնց հիւանդութիւնը դարմանել: Այս խիզախ տեսակէտին իրենց հաւանութիւնը կը յայտնէին կարեւոր դրամեկնիչներու հետ՝ ջղային հիւանդութեանց մասնագէտ բժիշկներ ալ:

Վերջին 20-30 տարիներու ընթացքին Փրանսացի եւ գերմանացի գրամեկնիչներ տեսան որ ֆիզիքական հիւանդութիւններն ալ, մանաւանդ ծանր հիւանդութիւնները, որոշ նշաններ կը ձգեն հիւանդին գրին վրայ: Ասով չենք կրնար ըսել, որ գիրը քննելով կարելի է հիւանդութեան ախտաճանաչութիւնը ընել, սակայն միշտ հնարաւոր է դիտնալ որ դրողը հիւանդ մ'է, ըլլա՛յ իր ունեցածը ջղային հիւանդութիւն, ըլլա՛յ գործարանական (օրկանիք) հիւանդութիւն:

Փրանսացի գրամեկնիչ մը՝ Տը Ռուժը-մոն, երկար ուսումնասիրութիւններէ յետոյ կը ցած է գտնել նշաններ՝ զորս քաղցր կեղծ վարակուած հիւանդներ կը ձգեն իրենց գիրերուն վրայ:

Իտալիոյ մէջ, ներկայիս, Մարի Աննա Լայպլ՝ ծագումով գերմանացի բժշկուհի, զանազան հիւանդութիւններով տառապող հիւանդներուն ձեռագիրները կ'ուսումնասիրէ: Իր ուսումնասիրութիւններուն արդիւնքը հրատարակեց յօդուածով մը «Կաղէթթա Ինթերնացիոնալէ տի Մէտիչինա է Քիրուրճիա»ի անցեալ տարուոյ Յունուար-Փետրուար դոյզ թիւերուն մէջ:

Քանի որ ներկայ գիտութիւնը մեզի պատրաստած է կատարեալ գործիքներ, ինչպէս electrocardiografo, electrocefalografo, որոնք մարմնոյն որոշ անդերը գնե-

լով թուղթի վրայ կը ձգեն գիծեր, եւ զորս քննելով կրնանք սրտի եւ ուղեղի հիւանդութիւնները ճանչնալ, ինչպէս չընդունիլ որ մարդկային մարմինը, որ գործիքներուն ամէնէն կատարեալն է, չձգէ ձեռագիրներու մէջ իմաստալից նշաններ:

Բայց ասոնք Գրամեկնութեան ապագայի հեռանկարներն են: Ինչ որ ներկայիս կրնանք վստահօրէն ըսել՝ այն է, որ Գրամեկնութիւնը հոգեբանական հետազոտութեան ձեւ մ'է, որ մինակը կրնայ լուծել Սոկրատի դարաւոր հարցը՝ «Մանիք զբեղ»ը:

Եզրակացնելով. Գրամեկնութիւնը թոյլ կու տայ մեզի ճանչնալ մարդկային հոգին, իր զանազան երեւոյթներուն մէջ, ի յայտ բերել մարդուն լաւ, ինչպէս նաեւ գէշ հակումները, խելքին, ուշիմութեան աստիճանը, եւ վերջապէս անոր ընկերային արժէքը:

Հետեւաբար կրնանք Գրամեկնութիւնը նկատել հոգեվերլուծութի մէկ քոյրը, որ անոր հետ միասին կ'ընթանայ ճանչնալու համար այն սքանչելի, զմայլելի, խորհրդաւոր բանը, որ մարդկային հոգին է:

ԲԺ. ԱՆԱՀԻՏ ՔԵԱՀԵԱՅԵԱՆ

Միլանոյ, 13 նոյ. 1954

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

- | | |
|---|------------------------|
| Trattato di Grafologia | Padre Gerolamo Moretti |
| Grafologia Psicologica | Marianna Leibl |
| I segreti della Scrittura | N. Semantovski Kurilo |
| Dalla grafologia alla Grafo Psicologia | Marco Marchesan |
| Investigazioni e ricerche di grafologia | G. Zanetti |
| La scrittura rivela il carattere | G. Vian |
| La Presse Médicale - Février | 1932 |
| » » » - Mai | 1932 |
| » » » - Décembre | 1932 |
| Gazzeita Internazionale di Medicina e Chirurgia - Gennaio, Febbraio | 1954 |
| Sapere | - 30 Nov. 1941 |